Նախագծային աշխատանք
«Մեր համայնքի բնակիչները»

Գավառ 2024

Հեղինակներ՝ Գավառի Ա. Իսահակյանի անվան N4 հիմնական դպրոցի 7Ա և 7Գ դասարանի աշակերտներ

Գավառ



Գավառը Գեղարքունիքի մարզի վարչական կենտրոնն է: Գտնվում է Գեղամա լեռնաշղթայի լանջին՝ Սևանա լճից դեպի արևմուտք:

Գավառի պատմությունը

Քաղաքը մինչև 1959 թվականը հայտնի է եղել որպես Նոր Բայազետ կամ Նովո-Բայազետ: Այն անվանվել է Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքի անունով: 1959 -1995 թվականներին քաղաքը հայտնի էր որպես Կամո՝ բոլշևիկ հեղափոխական Կամոյի (Սիմոն Տեր-Պետրոսյան) անունով: 1995 թվականին քաղաքը վերանվանվեց Գավառ: Տարածված է նաև քաղաքի «Քյավառ» արտասանությամբ անվանումը:

Գավառը հիմնադրվել է որպես Նոր Բայազեթ (կամ Նովո-Բայազեթ) 1830 թվականին՝ Սևանա լճից 8 կմ դեպի արևմուտք, Օսմանյան կայսրության Բայազեթ քաղաքի հայ գաղթականների կողմից: Ժամանակակից քաղաքի տարածքը բնակեցված է եղել բրոնզե դարից ի վեր: Այստեղ հայտնաբերվել են բազմաթիվ պատմական գերեզմանաքարեր, որոնք թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակով:

Քաղաքի կենտրոնում գտնվող բլրի վրա հայտնաբերվել են երկաթե դարին վերագրվող կիկլոպյան ամրոցի ավերակներ: Ենթադրվում է, որ ամրոցը Ուրարտական թագավորության կազմում գտնվող Վելիկուխի երկրի թագավորանիստն էր:

Այն շրջապատված է եղել ավելի քան 22 փոքր ամրոցներով: Վելիկուխի երկիրը նվաճվել է ուրարտական թագավոր Սարդուրի Բ-ի կողմից մ. թ. ա. 7-րդ դարում : Նրա որդին՝ Ռուսա II-ը, վերականգնել և վերանվանել է բերդը Արարատի երեք գլխավոր աստվածություններից մեկի՝ Խալդի աստծո անունով:
Գավառ քաղաքի Արծվաքար կոչվող թաղամասում է գտնվում երկաթի դարի մեկ այլ ամրոց, որը թվագրվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակով: Գավառում դուք կտեսնեք շատ այլ պատմական հուշարձաններ, վանքեր և հին խաչքարեր:

Գավառի մշակույթը

Գավառում գործում է երկրագիտական թանգարան, մշակութային պալատ, դրամատիկական թատրոն և գրադարաններ: Այստեղ կա նաև Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան:

Քաղաքն ունի պետական համալսարան, կրթական ուսումնական հաստատություններ, երաժշտական դպրոց, արվեստի դպրոց,մարզադպրոց:

Տեղական խոհանոցն առաջին հերթին հայտնի է իր «Քյավառի քյուֆթա» ուտեստով, որը պատրաստվում է աղացած և համեմված մսի գնդերով:, Այստեղ են պատրաստում ամենահամեղ իշխան ձուկը՝ միայն տեղացիներին հայտնի հատուկ բաղադրատոմսով:
Տեղի բնակիչները հիմնականում նախընտրում են ավանդական՝ կարմիր ցորենից պատրաստված հացը: Իրենց յուրահատուկ համով հայտնի են նաև Գավառի ավանդական խմորեղենները՝ գաթան,շաքարլոխումը և փախլավան:

Գյուղատնտեսություն

Բնակչության մոտ 19%-ը զբաղվում են գյուղատնտեսությամբ: Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքները մոտ 3000 հա Է:Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կարտոֆիլի,կաղամբի, կորնգանի,առվույտի, և այլ բանջարանոցային կուլտուրաների մշակությամբ:

Այլ մշակաբույսեր

Համայնքում տարածված է նաև բազմամյա խոտաբույսերի մշակումը: Ցանովի խոտաբույսերի բարձր բերքատվությունը հնարավորություն է տալիս ստանալու ավելի մեծ քանակությամբ անասնախոտ: Բարձր բերքատվություն է ապահովում նաև այն, որ վարելահողերում մշակաբույսերի փոփոխությունը չի որակազրկում հողը: Գարնանացան գարու հետ կատարվում է առվույտի և կորնգանի ցանք: Առաջին տարվա ստացած եկամտով փակում են կատարած ծախսերը, իսկ երկրորդ տարվանից՝ խոտադաշտերը կատարված ծախսերի ցուցանիշներով գրեթե հավասարվում են բնական խոտհարքի վրա կատարված ծախսերին՝ միևնույն ժամանակ ապահովելով 3-4 անգամ բարձր բերքատվություն: Համայնքներում աճեցնում են հատապտուղներ՝ ազնվամորի, բանջարեղեններ և դեկորացիոն այլ ծաղիկներ: Եթե բանջարեղենների աճեցումը նպաստում է տնտեսությանը ապահովելու համար և շուկայում մրցունակ չէ, քանի որ այլ համայնքներից բերված բերքը գնային առում ավելի մրցունակ է, ապա ազնվամորու աճեցումը կարող է շահեկան լինել: Ազնվամորու աճեցման համար կարևոր են՝ արևային օրերը և ոռոգման հնարավորությունը: Շուկայում ազնվամորին բավականին պահանջարկ ունի, որը գնալով աճում է: Այն պահանջված է ոչ միայն շուկաներում, այև վերամշակվող գործարանների կողմից:

Հաշվարկվել է , որ 1հա-ից ստացվում է 7-10տ բերք, եթե 1կգ վաճառվի 500-800դ, 1կգ բերքի ստացում և տեղափոխումը կազմի 300դ, ապա 1հա-ից կստացվի մոտ 4-4,5 մլն շահույթ:

Գավառի բնակչության թիվը



28792

ԻԳԱԿԱՆ

ԱՐԱԿԱՆ

Գավառի դպրոցներ



ԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՂ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՄԲԵՐ ԸՍՏ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ



Բնակչության տարիքային կազմը՝

Բնակչության տարիքային կազմը՝ ըստ տարիքի	**Բնակչության թիվը**	**0 - 6**	**7 - 17**	**18 եւ ավելի**
Բնակչության թիվը	**28792**	**1782**	**3900**	**23110**

Համայնքի վերջին 3 տարվա ժողովրդագրական տվյալները՝

Տարի	**Ծնունդներ**	**Մահացություններ**	**Ամուսնություններ**	**Ամուսնալուծություններ**
2021	**495**	**183**	**165**	**27**
2022	**352**	**190**	**170**	**25**
2023	**353**	**187**	**184**	**30**

Արտադպրոցական հաստատություններ	Խումբ/դասարան	Երեխաների թիվը	Նախատեսված /երեխա/
«Գավառի Ուսուցողական կենտրոն» ՀՈԱԿ	6	139	240
«Գավառի Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ	6	103	150
«Գավառի Երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	24	195	200
«Գավառի Արվեստի դպրոց» ՀՈԱԿ	27	368	430
«Գավառի Մարզադպրոց» ՀՈԱԿ	29	334	350

Նախադպրոցական հաստատություններ	Կրտսեր խումբ	Միջին խումբ	Ավագ խումբ	Նախատեսված /երեխա/	Հաճախող երեխաներ
«Գավառի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1	1	1	90	71
«Գավառի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1	1	2	120	113
«Գավառի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1	1	1	90	79